

14.

Մեծապատիւ Յօհաննէս վարդապետ
Իմ մտերիմ եղբայր :

Ընկալայ զձեր թղթոց Հոգեւոր ատենի
Աստրախանայ զոր հանդերձ թղթով ձերով
առաքեալ էր ձեր առ իս :

Այսօր գիտակ եղէ զի բարձր Սրբազանն
Վրաստանի յուղի արկեալ է ի 27 ամսեան
անցելոյ : Ընդհանրականք Նորին Վ. Սրբու-
թեան հասեալ են առ Բաղդասար Արհին եւ
առ Սիմէոնն Ղարապաղու :

Բարսեղ Սրբազան Արքեպիսկոպոս եղ-
բայրն գրեալ էր յերեկեան առուր առ իս
վասն երկվարին պատկանելոյ Սրբոյ Աթոռոյ
եւն : Քանզի այրն որ վաճառեալ է զայն՝ մե-
ռեալ է, վէճն երկարաձգի, բայց յամենայն
ատենական վէճս ձեր պարտիք ունել զիստ-
տարան զօք, որ զհետ եղիցի հանել զվճրոն :

Յերկրորդում շարաթու աղուհացից յու-
սամ գիմել առ ձեզ, բայց ցայն վայր՝
ինչպէս միշտ տալ ինձ տեղեկութիւն ամե-
նայն հարկաւոր գիտելեաց, եւ մանաւանդ
գիտակ զիս առնել թէ զինչ հանրաւ այսօր
ընկալայք ի Տփլիսեաց եւն :

Գրկելով զձեզ եմ ցմահ

Եղբայր ձեր Սերովբէ Արքեպիսկոպոս :
Երեւան, Ուրբաթ օր* :

Ահա այս շրջանում է սկսում Սերովբէի
գրագրութիւնը Ղրիմեցի Յովհաննէս վար-
դապետի հետ, որ տեւում է մի տարի
(1830 թ. Յուլիս 6ից մինչեւ 1831 թ.
Մայիսի 9ը) : Սերովբէն եւ իշխան Բէհրու-
դեանը էջմիածնում եղած ժամանակ, հա-
մաձայն Պասկելիչի հրահանգի, խոստում-
ներով եւ սպառնալիքներով ստիպեցին միա-
բանութեան անդամներից շատերին, նոյն իսկ
Ներսէսի կատարի կողմնակիցներին, ինչպէս
էր Յովսէփ վարդապետը, անցնել Կարբեցու
կողմը : Դրանց թուումն էր եւ Ղրիմեցի Յով-
հաննէս վարդապետը, որ Մինսկի անդամ եւ
ատենադպիր էր եւ մեծ դիրք ունէր էջմիած-
նում, որտեղ նա յայտնի էր եւ որպէս գիտ-
նական անձնաւորութիւն : Այստեղ հրատա-
րակում են մեր ձեռքի տակ եղած Սերովբ-
էի նամակներն ահա այդ Յովհաննէս վար-

* Հաւանական է, որ սոյն նամակը Սերովբէ ար-
քեպիսկոպոսի նամակների շարքում երկրորդը լինի,
բայց թուական չունենալու պատճառով գետեղում
ենք վերջում :

դապետ Ղրիմեցուն, որոնք լիքն են ակնարկ-
ներով այն խոստումների մասին, որ Սերով-
բէն արել էր նրան :

Շուտով տեղի ունեցան եւ կաթողիկո-
սական ընտրութիւնները որպէս հետեւանք
Եփրեմի կամաւոր հրաժարման կաթողիկո-
սական դահլից եւ Սերովբէն Պասկելիչի կող-
մից նշանակուեց, որ «գաղանի կերպով հա-
մաձայնեցնէ պատրիարքի եւ միւս եպիսկո-
պոսների կարծիքները տէրութեան նպատակ-
ների հետ» : Եւ Յովհաննէս Կարբեցու ըն-
տրութեան, այս արագիկամեղիցի, տխուր
հերոսները հանդիսացան Սերովբէն եւ իշ-
խան Բէհրուդով : Սակայն պէտք է նկատել,
որ վերջինս Երեւան գնալիս Սերովբէին մե-
նակ էր թողնում էջմիածնում, վախենա-
լով, որ մի՛ գուցէ իր բացակայութեան ժա-
մանակ անդուստ արքեպիսկոպոսը ըն-
տրութիւնների ընթացքը Կարբեցուց լուս-
տայ դէպի իր կողմը... : «Ընտրութիւն-
ները» վերջացան. Կարբեցին հաստատուեց
կաթողիկոս, իսկ Սերովբէն ստացաւ Սուրբ
Աննայի առաջին աստիճանի չքանչան... :

Բացի վերոյիշեալ յատկութիւններից
Սերովբէն յայտնի էր իր քննախնդրու-
թեամբ : Յայտնի է, թէ ինչո՞ւ նա վերոյի-
շեալ նամակագրութիւնից յետոյ կարիք հա-
մարեց դէն հրել իրենից Յովհաննէս վարդա-
պետ Ղրիմեցուն. բայց նա դրանով չը բա-
ւականացաւ եւ նա ոչ միայն Ղրիմեցու,
այլ եւ Յովհաննէս Կարբեցու վկայութեամբ
դարձաւ այն հալածանքների դրդապատ-
ճառը, որ յարուցեց Ղրիմեցու դէմ Յով-
հաննէս Կարբեցի կաթողիկոսը : Նա յայտնի
էր նոյնպէս անամէջ պարծենկոտութեամբ,
անվայել վարքով, կաշառակերութեամբ եւ,
որտեղ հնարաւոր էր, նաեւ ինքնիշխան
բռնակալութեամբ : Նրա նամակները Յով-
հաննէս վարդապետ Ղրիմեցուն վխտում են
անմիտ պոռոտախօսութեամբ, որով նա այն
տպաւորութիւնն է թողնում, կարծես թէ
ամբողջ ազգի բախտը անօրինոզն ինքն է :
Սերովբէն չէր ճանաչում Յովհաննէս Կար-
բեցի կաթողիկոսի եւ Մինսկի իշխանութիւնը
իր թեմական գործերում, որ նա կառավա-
րում էր մեծ գեղձումներով, այնպէս որ
Ներսէսը կաթողիկոս դառնալով պատրաս-
տում էր հաշիւներ պահանջել նրանից, բայց
մահը փրկեց Սերովբէին՝ հաշուետուու-
թիւնից :

Ընդհանուր գիտողութիւն. — Սերովբ-
բէն սիրում է ստորագրել «Սերովբէ վար-
դապետ», բայց մէջ ընդ մէջ նաեւ «Եպիս-
կոպոս» եւ «արքեպիսկոպոս» : պէտք է ի
նկատի ունենալ, որ Յ. Ղրիմեցուն առաջին
նամակը գրելիս նա արդէն Եպիսկոպոս էր :

Ռ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ



ՈՂԵՔՍԵՆԻՐ ՄԸՆԹԱՅԵՆՑ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԺԸ

Յիշողութիւններ՝ իր մահուան 20 ամեակի
առթիւ :

(Շարունակութիւն) :

Բ.

Բաբու, քարիւղի աղբիւրների կենդրո-
նատեղին, գտնուում է Ապշերոնեան թե-
րակղզու ծայրը, Կասպից ծովի եզերքին :
Ռուսական հող է դարձած վերջնականապէս՝
միայն 1806ին. վերջնականապէս եմ ասում,
որովհետեւ մինչեւ այդ թուականը ռուսները
մի քանի անգամ դրաւել ու ետ են տուել
պարսիկներին :

Բաքուն¹ եւ իր շրջակայքը շատ վաղուց
հանրաձանօթ էին, չնորհիւ այնտեղ, գետ-
նից հոսող բնական գազին (gaz) : Այս գազն
էր, որ «յաւիտենական հուր» էր կոչուած,
որովհետեւ անվերջ բոլորում էր եւ վառում
գետնի երեսին : Բաւական էր հողը փոքր ինչ
ձեռքով փորել եւ լուցիկ վառել. անմիջա-
պէս դաղը բռնկում էր, ինչպէս ես ինքս փոր-
ձել եմ, 1899ին, երբ առաջին անգամ Բաքու
եմ զննեցել : Բաքուի մօտ այժմ Սուրախանի
(հաւանականաբար -խանի պարսկ. վերջա-
ւորութեամբ) կոչուած գեղն էր, այդ «յա-
ւիտենական հուրի» կենդրոնն, որովհետեւ
նա պարսից տիրապետութեան ժամանակ
«Աթէշգեհան» (آتشخانه) = կրակատեղի՝ ա-
նունն էր կրում : Եւ իրօք այստեղ էր գրա-
նուած այն մեծ կրակատունն, ուր գրադաշ-
տականներն իրենց պաշտամունքն էին կա-
տարում, եւ ուր գալիս էին այդ նպատակի
համար նոյն իսկ Հնդկաստանից այնտեղ տե-

¹ Բաքուն՝ Հայ պատմագրի Բազուման է հա-
մարում, Սասանեանների շրջանի :

գափխուած փարսիները (կրակապաշտ պար-
սիկներ) : Այս կրակատունն, որ ես այցելել
եմ, 4 սիւնաձեւ աշտարակներ ունի, որոնց
վերին ծայրերից անվերջ հոսում էր զեանա-
րուղի բնական լուսաւոր գազն եւ տա-
րածուած օդի մէջ : Նախկին կրակատունը
1868ից սկսած նախային գտարանի պատերի
մէջ էր առնուած թէեւ այդ գործարանն ինքն
էլ անգործութեան է մատնուած հիմայ :
Վերջին անգամ այնտեղ կրակի պաշտամունք
է կատարուել 1888ին երբ ռուսաց Աղեքսանդր
Գ. կայսրը Բաքու է եկել եւ նրան հաճոյք
պատճառելու համար յատկապէս Հնդկաս-
տանից կրակապաշտ մոզեր են բերել տուել :

Նախային արդիւնաբերութիւնը Բաքուի
շրջանում, թէեւ տասնեակ տարիներ յա-
ռաջ ծանօթ, բայց իսկապէս 1880 թուակա-
նից է սկսած ծաղկել : Ես այստեղ մտադիր
չեմ մասնագիտական տեղեկութիւններ տալ
նախի (нефть, naphte, կամ pétrole brut)
ծաղման կամ բնական յատկութիւնների,
դրանք եւ նրանից ստացուած (dérivé) ար-
դիւնաբերական եղերի մասին, որոնք իմ
ծրագրից դուրս են : Այսչափ միայն ասեմ
զործին բոլորովին անձանօթ ընթերցողի տե-
ղեկութեան համար որ նախակիր համա-
րուած գաշտում հոր են փորում, եւ երկաթէ
լայն խողովակներ միմիանց կցելով իջեց-
նում են հորի մէջ մինչեւ նախի գտնուած
տեղը հասնելը. այդ խորութիւնը երբեմն
լինում է հարիւրաւոր մէտր եւ այնուհետեւ
նեղ եւ երկար գոյլեր մեքենայի միջոցով վար
իջեցնելով քաշում հանում են նախի : Այս
գործողութիւնը հետզհետէ աւելի կատարե-
լագործուած ձեւ է ստացած : Այսպէս գետնի
խորութիւնից լոյս աշխարհ հանուած սեւ
նախի կամ հում քարիւղը (pétrole brut) փո-
խադրում են զտելու գործարան, ուր նախ
գտում են իր ծանր մասերից եւ պատրաս-
տում են կէրօսին, որ լուսաւորութեան հա-
մար է գործածուում եւ բէնզին (essence), որ
ինքնաշարժների (automobile) եւ սաւառակ-
ների (avion) համար է : Այս գտումից յետոյ
մնացած մասը, որ այդ պատճառով էլ ռու-
սերէն մնացորդ (остатки) է կոչուում կամ
մագուտ, գործածուում է իրրեւ ընտիր վա-
ռելիք՝ մեքենաների համար : Այս միւսնոյն
մագուտը զտելով պատրաստում են զանազան
տեսակ մեքենական եղեր :

Ի սկզբան գործարաններում հում նաւ-

դիզելուց յետոյ այս հրէաներն, աւելի ընդարձակ գործերի էին ձեռնարկում, զանազան ապրանքներ առնում, ծախում էին, գործարաններ էին վարձում եւ բանեցնում եւ կամ ընկերանում էին տեղացի հայ եւ թուրք սեպհականատէրերի ձեռնարկութիւններին: Եղան մի երկուսը, որոնք առանց կողքի կեան Բաքու եւ հարստութիւն դիզելով տեղափոխուեցան Պետերբուրգ, այնտեղ կարուածներ դնեցին կամ բանկային գործունէութեան սկսան: Գտնուեցան նաեւ այնպիսիներն, որոնք կեղծ սնանկութիւն սարքելով իրենց պարտքերը չվճարեցին եւ փախան Բաքուից:

Հրեաների նկատմամբ ցարական ժամանակի ոռուական օրէնքը մեծ սահմանափակումներ ունէր: Հրեաները կամ ճշգրտօրէն՝ «հրէական դաւանութեան պատկանողները», ինչպէս ասուած էր Օրէնքի մէջ, իրաւունք չունէին հողեր, տներ եւ նաւեր գնելու, իրենց համար սահմանուած յատուկ երկրային շրջանից դուրս, ինչպէս էր օրինակի համար Բաքուն եւ շրջակայքը: Իրաւունք չունէին առեւտրական ընկերութիւններէ մէջ պատասխանատու վարելէ սկսած զանազան կատարելու: Բնիտոյի կամ աւելի ճիշդը Պարիզի Բոչիլի ներկայացուցիչը Բաքու, որ ծագմամբ էլ, դաւանութեամբ էլ հրեայ էր (Ա. Փ.) ստիպուած եղաւ փոխել իր դաւանութիւնն եւ կաթոլիկութիւն ընդունել, որպէս զի իրաւունք ունենար իր պաշտօնը վարելու: Բաքուի կաթոլիկներն էլ, մեծ մասամբ Լեհացիներ եւ փոքր թիւով հայեր, որոնք այն միջոցին առաջին կաթոլիկական եկեղեցին էին կառուցանում, օգտուեցան այս հանգամանքից եւ այդ նորադարձի Երևութեան Յանձնաժողովի անդամ ընտրեցին: Պարոն Ա. Փ. կամայ թէ ակամայ՝ ընդունեց եւ իրապէս օգտակար էլ եղաւ³:

Փրանսական (Բոչիլի) դրամազույց յետոյ, եւ բաւական տարիներ յետոյ, մուտ գործեց Բաքու անգլիական դրամազույցը: Անգլիացիք մեծապէս հետաքրքրուել էին Բաքուի նաւթով, նրա արդիւնքների ձեռք բերած յաջողութիւնը տեսնելով: Անգլիական շուկան արդէն սկսել էր ողողուել Բաքուի կէրօսինով եւ մեքենական եղբորով, որոնք կարողանում էին մրցել ամերիկականներէ հետ: Անգլիացի քննիչներ եկան Բաքու իրերի վիճակը քննելու համար եւ անմիջապէս Լոնդոնում մի քանի հողի սինդիկատ կազմեցին պատրաստի նաւթային գործեր ձեռք բերելու եւ յետոյ մեծ շահով ուրիշներին, այսինքն բաժնետիրական ընկերութիւններին (Société en actions) փոխանցելու համար: Առաջին մեծ գործն, որ նրանք սակարկեցին եւ գնեցին, թուրք Հաջի Չէյ-նալ Արզին Թաղիեվի՝ Բիրի-Հէյրաթի նաւթահողերն ու գործարանն էր: Թաղիեվ չէր հաւատում թէ նրան իրօք կը վճարեն 5,000,000 ռուբլի այն գործի համար, որ նրան միայն 200,000 էր արժէլ, թէեւ այդ էլ նա վաղուց եւ կրկնակի ետ էր առել: Անգլիացիք համաձայնեցան վճարել այդ գումարը, որից 500,000ը կանխիկ, իսկ մնացածը որոշ պայմանաժամերով, կարճ ժամանակ վերջը: Թաղիեվ հաւատացած էր, որ անգլիացիք կը զղջան մնացած 4½ միլիոնը չեն կարողանայ վճարի եւ այդ կէս միլիոնը կը մնար գուտ շահ իրեն: Բայց զղջացողն ինք եղաւ: Գործն անգլիացիների ձեռքն անցնելուց յետոյ նրա նաւթահողերից մէկը սկսաւ ժայթքել եւ այնքան մեծ քանակութեամբ նաւթ (օրական մինչեւ 15,000 tonnes) արտադրել, որ անգլիացիք, որոնք Oleum համառօտութեամբ ընկերութիւն էին կազմել £ 1 արժողութեամբ ակցիաներով, այդ դրամազույցին պէտք չունեցան, այլ նաւ-

մերժուել լսելով տղան այնչափ լացել, պողտակ էր, որ հայրը ցաւ ի սիրտ տարել էր նրան ոռու քահանայի քով, մկրտել տուել եւ հարկ եղած վկայականն առնելով նորից դիմել էր դպրոց: Այս գործողութիւնը 3 շաբաթ ժամանակ էր պահանջել եւ այդ միջոցին հանգամանքները փոխուել էին...: Վերադառնալով հրեային տեսնում է թէ չէ, առանց թողնելու որ նա խօսի, ինքն ուրախութեամբ հաղորդում է նրան, թէ հիմայ կարող էր նրա որդուն ընդունել, որովհետեւ... անտպակի կերպով մի հրեայ աշակերտի տեղ էր բացուել: Խեղճ հրեայի զոհողութիւնն անօգուտ էր եղել, բայց արդէն ուշ էր. ետ դառնալ կարելի չէր. ոռուական օրէնքն այդ մասին անողոր էր. «ռուսագաւաններին» արդելուած էր կրօնափոխ լինել...:

³ Ինձ յայտնի է այս մասին, սրտաշարժ մի պարագայ: Ռուսական օրէնքով, պետական դպրոցներում հրեայ աշակերտներ թիւը սահմանափակուած էր. օրինակի համար Բաքու, աշակերտների ընդհանուր թուի 50/0ից աւելի հրեայ չէր ընդունում: Բաքու դպրոցում միջոցին մի հրեայ ծանօթ ունէի, որ ուղիւստու էր մի տղայ ունէր: Այս տղան ուղիւստու էր գիմնասի (gymnase) մասնէլ, ստատիկ ցանկանում էր գիմնասի (gymnase) մասնէլ, բայց չէր յաջողում: Հրեան եկաւ իմ միջնորդութիւնս խնդրեց. ես գիմնի դպրոցի վերատեսչին, որ թիֆլիսացի հայ էր եւ բարեկամս էր, բայց անօր թիֆլիսացի հայ էր եւ բարեկամս էր, բայց անօր դուստ: Հրեայ աշակերտների օրինական թիւը լցուած էր, բայց... տեղ կար ոչ-հրեայ կամ «հրէական դաւանութեան չպատկանող» աշակերտի համար: Այս

թահորերի տուած արդիւնքով վճարեցին իրենց պարտքը Թաղիեվին: Այնուհետեւ ուրիշ անգլիական ընկերութիւններ կազմուեցան, որոնք ուրիշ գործեր ձեռք առին: Այս անգամ հայերն եղան ծախող, շատ խոշոր գումարներով, որոնք անսպասելի կերպով միլիոններ գրպանելով հեռացան Բաքուից եւ իրենց բնակութիւնը հաստատեցին Թիֆլիսում: Նոյն անգլիացիք կամ ուրիշ նրանց օրինակին հետեւողներ, Բաքուից յետոյ իրենց ուշադրութիւնը դարձրին հիւսիսային կովկասի վրայ, ուր նոյնպէս նաւթ էր երեւացել եւ նաւթային արդիւնարեքութիւնը մեծ ապագայ էր խոստանում եւ նորանոր ընկերութիւններ կազմելով այնտեղ եւս ընդարձակ նաւթահողերի տիրացան: Այստեղ հարեւանցի կերպով յիշեմ, որ այս բոլոր անգլիական ձեռնարկութիւնների մէջ իր մասն ունէր՝ լոնդոնաբնակ, մի ճարպիկ, գործունեայ եւ հեռատես հայ երիտասարդ, որ այնուհետեւ աւելի եւս մղուելով քարիւղի գործի մէջ ոչ միայն Բաքուի այլ աշխարհի ամէն կողմը, տիրապետող դեր պիտի կատարէր այդ օրինակ ձեռնարկութիւնների մէջ եւ միլիարդատէր դառնար:

Արտասահմանեան դրամազույցների մասնակցութիւնը շատ մեծ դարկ տուաւ Բաքուի նաւթի ո՛չ միայն տեղական արտադրութեանն, այլ նաեւ արտահանութեան, այսինքն օտար շուկաների վրայ տարածման եւ մասնաւոր՝ թէ հում նաւթի եւ թէ կէրօսինի ու եղերի գների բարձրացման: Արդիւնարեքութեան աճումը հսկայական էր. երբ 1875ին Բաքուի հորերը միայն 7,000,000 պուղ (1 պուղ = 16 kilogrammes) էին տուել իսկ 1880ին 31 միլիոն, այնուհետեւ նոր հողերի շահագործման շնորհիւ այդ քանակութիւնը 1900—1905ին հասել էր արդէն 500 միլիոն պուղի եւ այսպէս պիտի տեւէր մինչեւ պատերազմի տարին, երբ պարագաների բերմամբ շահագործումը նուազեց: Նոյն համեմատութեամբ աճել էր նաեւ գտուած արդիւնքների չափը: 1875ին ընդամէնը 15—20 հազար tonnes (= 1000 կիլոգրամ) կէրօսին էր ստացուում, իսկ 1890ին այդ քանակութիւնը հասել էր մէկ միլիոն tonnes, մէջը հաշուելով նաեւ մեքենական եղբրը:

Նաւթային հորերն ունէին իրենց արկածային շրջանն եւս: Երբեմն նաւթը՝ փո-

խանակ հանգարտ կերպով, այսինքն մեքենական միջոցով դուրս հանուելու, անհամբերութեամբ, իր տակը հաւաքուած բնական գազի ոյժից մղուած, ինքնին բղխում կամ աւելի ճիշդը ժայթքում էր ստակալի շատրուանի նման: Այդպիսի շատրուաններ կամ բազուցիների բարբառով «Փանտան»ներ (fontaine) շատ յաճախ էին եւ յանկարճ հարստացնում էին իրենց տիրոջը: Երբ մէկի հորը «խփում» էր ինչպէս ասում էին նոյն բարբառով, իսկոյն լուրը տարածուում էր եւ ամէնքը ուշադրութեամբ հետեւում էին նրա ընթացքին: Բայց «Փանտանը» ամէն անգամ բախտ չէր բերում իր տիրոջ, երբեմն նա աւելի քան էր պատճառում քան օգուտ: Առաջին ժամանակները, երբ գինը դեռ շատ ցած էր եւ պահանջը քիչ էր, երբ մասնաւոր նաւթ ամբարելու տեղ էլ չէր լինում, հորի տէրը ստիպուած էր բնութեան այդ թանգարտէք նուէրից ազատուելու միջոցը փնտռել եւ նա ճամբայ էր բանում, որ շատրուանի արձակած նաւթը երթայ ծովը թափուել, այլապէս նա քնասում էր իր շուրջը գտնուած բոլոր կայքը թէ հորատիրոջն եւ թէ դրացիներին, որից տուժում էր հորի տէրը: Ուստի վերջերը երբ նաւթի գինը բարձրացաւ, բնականաբար ամէն մարդ աշխատում էր, որ նա չկորսուի իր համար: Ուստի շատ մեծ հաստութեամբ երկաթէ ճածկոցով փակում էին հորի բերանը, որ շատրուանը «չխփի»: Այս արգելքը երբեմն յաջողում էր դադարեցնել, երբեմն ոչ: Պատահում էր, որ ժայթքող նաւթի բուռն մղումի ազդեցութեամբ երկաթէ խոշոր ճածկոցը կամ ծախուած էր եւ կամ վեր մղում եւ նաւթը շարունակում էր «խփել»: Երբեմն էլ որեւէ դիպուածով յանկարճ նաւթն սկսում էր այրուել, եւ սոսկալի հրդէն էր գոյանում, որ տարածուում էր իր շուրջը: Ես պատահել եմ մի այդպիսի հրդէն Բիրի-Հէյրաթում, երբ 3 հազարն շատրուան միանգամայն այրուում էին, իրենց բոցը արձակելով մինչեւ 50 մէտր բարձրութեամբ եւ նրանց կայծերը տարածուելով հրդէն էին պատճառել նաեւ դրացիների հորերում եւ այդպէս 50 հոր միաժամանակ այրուում էին. տեսարանը հազուադիւրս էր եւ աննման: Բայց ոչ ոք չէր յուսահատուում. հրդէնը չվերջացած, արդէն հորերի տէրերը հարկ եղած նիւթերն էին բերում, այրուած

վըշկաների (հորերի վրայ շինուած տնակներն, ուր գտնուած են մեքենաներն եւ այլ պիտոյքը) փոխարէն, առանց ժամանակ կորսնցնելու, նորերը կանգնելու համար... Գալով հում նաւթի տեղական գինն, նա սկիզբները, այսինքն նոյն իսկ մինչեւ 1890 դեռ պուլը 2 կոպէկի մօտ էր գնահատուած (16 Kilo = 5 centimes). Եւ միայն 1890ից յետոյ էր, որ 5—6 կոպէկի ելաւ եւ ապա հետագհետէ բարձրանալով պատերազմի ծագման տարին (1914) հասել էր 20—25 կոպէկի:

Նաւթային արդիւնաբերութեան զարգացման գլխաւոր շարժառիթը ուսումնական կէրօսինի եւ այլ նաւթային արդիւնքների արտասահմանում գտած մեծ յաջողութիւնն էր, որով նա կարողանում էր մրցել ամերիկականի հետ:

Մեծ դժուարութիւն էր պատճառում ի սկզբան նաւթային արդիւնքների դէպի օտար շուկաների փոխադրութիւնը: Երկաթուղին Կովկասում սկսած է բանիլ միայն 1881ից, երբ Սեւ Ծովը կապուեց այս միջոցով Կասպից ծովի հետ: Այս երկաթուղին՝ առաջին տարիները կառուցանողների (Բունդէ-Պալաշէովսկի) մտակարարութեան տակ էր, մինչեւ որ Կառավարութիւնը գնեց ամբողջ գիծն եւ պետական Վարչութիւն եւ ձեռնարկութիւն դարձրեց: Բայց երկաթուղին թէ՛ չէր բաւականանում հեռագհետէ աւելացող արտածութեան պահանջը գոհացնելու, թէ՛ բաւականաչափ արագ չէր, որովհետեւ Բաքուից-Բաթում միայն մէկ գիծ էր եւ ոչ թէ կրկին, եւ թէ սուղ էր նստում: Ուստի Կառավարութիւնը յատկապէս կէրօսինի փոխադրութեան համար Բաքուից մինչեւ Բաթում ամբողջ 850 կիլոմէտր տարածութեան վրայ երկաթէ խողովակներից նաւթուղի (нефтепровод, pipe-line) շինեց. իսկ միւս նաւթային արդիւնքները, ինչպէս մեքենական եղերը, բէնզինը, սոլարը, մագուար եւ այլն ըստ առաջնոյն փոխադրուեցին երկաթուղային վազոններով: Բաթումում թէ՛ Երկաթուղային Վարչութեան եւ թէ՛ տեղական գործարանատէրերի կողմից ընդարձակ ընդգրկուեցին շինուեցին, որտեղ թէ՛ կէրօսինն եւ թէ՛ միւս եղերը ամբարուած էին մինչեւ չոգենակների բարձրմը: Կէրօսինի արտածումն արագացնելու եւ դիւրացնելու համար ուրիշ ճանապարհ եւ ուրիշ նաւահանգիստ եւս կար — Նովօրօսիյսկը Սեւ

Ծովի վրայ, որ թէպէտ հիւսիսային Կովկասի նաւթային արդիւնաբերութիւնն ի նկատի ունէր, բայց ծառայում էր նաեւ Բաքուին, որտեղից յատուկ նաւթարարձ նաւերը Կասպից ծովով բերում էին Պետրոլսկ նաւահանգիստն եւ այնտեղից կէրօսինը երկաթուղային վազոններով փոխադրուած էր Նովօրօսիյսկ:

Գ.

Նաւթային արդիւնաբերութեան ծագկումից յառաջ Բաքուի մէջ փոքրաթիւ հայ զաղութ միայն կար: Առաջին անգամ շաքարի տրանզիտի (transit) առուստուրն է, որ Կովկասի միւս տեղերից հայ առեւտրականներին գրաւել է Բաքու: Տրանզիտը կայանում էր նրանում, որ եւրոպական շաքարը անմաքս մտնում էր Բաթում կամ Փոթի եւ նոյնպէս աղասօրէն փոխադրուելով Բաքու, այնտեղից Կասպից ծովով ուղարկուած էր Պարսկաստան: Այդ պատճառով Բաքուն շաքարի մեծ պահեստատեղի էր դարձել եւ զրա վրայ ընդարձակ գործեր էին կատարուած: Երբ Ռուսաստան իր ճակնդեղի արտերը տարածեց եւ մեծ գործարաններ հիմնելով ի վիճակի եղաւ ոչ միայն իր ներքին պէտքերը գոհացնել այլ նաեւ շաքար արտածել, այն ժամանակ այդ արանդիտն արդեւուեց, որով նրա հետ կապուած գործերն էլ զաղարեցին: Այդ ժամանակ Բաքու անգործ մնացած հայ վաճառականներն իրենց ուշադրութիւնը դարձրին այն սեւ նիւթի վրայ, որի շահագործումն եւ արտածումը սկսել էր ընդհանրանալ: Այդ սեւ նիւթը, քարիւղը՝ հարիւրապատիկ նոյն իսկ հազարապատիկ պիտի վարձատրէր այն կորուստի փոխարէն, որ նրանք ունէին շաքարի արանդիտի զաղարուծից: Բայց այս շահագործումին նախաձեռնարկ են եղած այն հեռատես վաճառականներն, որոնք, ինչպէս ասում են, նաւթի «հոտն առնելով» փութացել էին Բաքու: Այսպիսիների մէջ առաջին տեղը գրաւում է Թիֆլիսցի մի հարուստ հայ առեւտրական, Միրզոյեւ, որ շահագործել է իրեն ամէնից դիւրին երեւցած աղբիւրն, այն է Սուրախանի «յաւիտենական հօւրն» եւ նրա արտաբերած սպիտակ նաւթը:

Իվան Մինայիչ Միրզոյեւ (= Միրզոյեան Մինասի որդի Յովհաննէս) նախ

մետաքսի առուստուրով էր պարապում. նա մետաքսի գործարան էր հիմնած Նուխի քաղաքում (Կովկասում), ուր շերամապահութիւնը շատ էր տարածուած: Բայց Միրզոյեան արուեստագէտ չէր. նա չգիտէր թէ ինչպէս պէտք էր նաւթը գտել, որ նրանից գոյանայ լոյս վառելու յարմար նիւթ, կամ կէրօսին: Ուստի 1868ին նա ընկեր առաւ մի ուսու արուեստագէտ, Կոկորէվ անունով եւ սրանք երկուսը միասին հիմնեցին առաջին նաւթադարանը: Այս առաջին նաւթարդիւնաբերողների գործադրած միջոցները շատ նահապետական էին: Նրանք հողը փորելով, ստացուած հում նաւթը լցնում էին տիկերի մէջ եւ եղան սայլերով փոխադրում էին իրենց փոքրիկ գործարանը: Միրզոյեան եւ Կոկորէվ եղան նաեւ կէրօսինի առաջին արտահանողները. նրանք կէրօսինը դեռ քիչ քանակութեամբ էին գտնում, որովհետեւ պահանջը մեծ չէր, քանի որ Բաքուից մինչեւ հիւսիսային ուսումնական մեծ շուկան, Նիժնի Նովոօրօզի տօնավաճառը, կէրօսինի փոխադրութիւնը այն ժամանակ ամիսներ էր տեւում եւ շատ սուղ նստում: Այս ամէնը կերպարանափոխուեց երբ Նօրէլ եկաւ Բաքու, եւ իր հանձարեղ նորամուծութիւններով մեծ զարկ տուեց ամբողջ նաւթային արդիւնաբերութեան, ինչպէս վերը տեսանք: Միրզոյեւները կարողացել էին իր ժամանակին շատ նպաստաւոր պայմաններով ընտիր հողեր ձեռք անցնել: Այդ հողերի մէջ փորուած մի հողից 1877ին այնպիսի խոշոր քանակութեամբ նաւթ ինքնարուղիս կերպով ժայթքել էր, որ նրանց արդիւնաբերութիւնը միանգամ ընդ միշտ հաստատուն ձեւ էր առել, այսինքն նիւթական միջոցների կողմից ապահովուել: Այդ միեւնոյն հողը զրանից յետոյ կանոնաւորապէս դեռ 7 տարի էլի նաւթ է տուել, որ հազուադէպ երեւոյթ է. առ հասարակ նաւթային հորերի կեանքը շատ աւելի կարճատեւ է լինում, երբ գետնի խորութեան մէջ գտնուած նաւթի պաշարն սպառուած է, կամ այնքան պակաս է, որ շահագործելն աղարդիւն է դառնում:

Այս մեծ ձեռնարկութիւնը յետոյ ակցիոններական ընկերութեան վերածուեց, «Միրզոյեւ Երայրների ընկերակցութիւն (Товарищество Братьев Мирзоевых) անունով, որի ստուար մասը եթէ ոչ ամբողջը՝ միշտ մնաց հայոց ձեռքումը. Մանթաշեանց Բաքու

գալուց եւ իր սեպհական գործը կարգի դնելուց յետոյ յաջողեցաւ «Միրզոյեւ ընկերակցութեան» ակցիաների (action) մեծ մասին տէր դառնալ: Այդ կերպով նա ուղղութիւն էր տալիս նաեւ ամբողջ այդ ձեռնարկութեան եւ ի հարկէ մեծ շահ ստանում նրանից: Երբ Նօրէլ իր երկաթեայ խողովակների նաւթուղին կառուցեց եւ տիկերի ու սայլերի գործածութիւնը վաւարեց, առաջին անգամ դարձեալ մի Վրաստանցի հայ եղաւ նրանից օրինակ առնողը, Գէորգ Լիանոզեան (ուսումնական ձեւով՝ Գէորգի Մարտիրոսի Լիանոզով), որ 1879ին նոյնպէս նաւթուղի շինեց իր սեպհական գործարանի համար: Այս Լիանոզեանի որդին է Սեւփան Գէորգեւիչ Լիանոզովն, որ յետոյ այնքան մեծ գեր պիտի խաղար թէ Պետերբուրգի եւ թէ Եւրոպայի նաւթարդիւնաբերական շրջաններում: Երբ այս ձեւով նաւթային արդիւնաբերութիւնը նոր ճանապարհի մէջ մտնելով փոքր ի շատէ կանոնաւորուեց, ամէն կողմից Բաքու թափուեցան բախտ որոնողներ կամ շուտ հարստանալու ձգտողներ, այնպէս ինչպէս թափուած են բախտախնդիրները ոսկեհանքերի վրայ: Այս եկուորների ստուար մեծամասնութիւնը հայ էր:

Նաւթային արդիւնաբերութիւնը միշտ անպայման շահաբեր գործ չէր. ունէր նաեւ իր վտանգաւոր կողմը, իր ընկեր (risque) բաժինը: Այս կամ այն ձեւով, մասնաւոր հողատէրերից կամ կառավարութիւնից վարձու առնուած հողերը միշտ կամ անմիջապէս չէին համապատասխանում իրենց վրայ դրուած յոյսերին: Գիտար էր մանաւանդ որոշել թէ մեծ ծախքով փորուած հորերը երբ պիտի սկսին նաւթ տալ եւ որչափ, որից էր կախուած գործի ամբողջ օգտակարութիւնը: Այս պայմաններում, յաջողութիւնը պատկանում էր նրան, ո՛վ որ ոչ միայն շատ հոր «կը դնէր», ինչպէս ասում են բաքուցիք, այլ կարող էր ծախքերին դիմանալ մինչեւ նաւթի երեւալը հորի խորութեան մէջ: Ուստի նաւթային գործին նախաձեռնարկ եղող հայերի ստուար մասը, ոչ հմտութիւն եւ ոչ էլ մանաւանդ բաւականաչափ զրամադրուիս չունենալով, լուազոյն համարեցին ընկերովի գործել եւ ըրիկը բաժնել միմիանց մէջ, ինչպէս եւ օգուար, բնականաբար: Այս նպատակով, 1880ական թուականներից սկսած հայ եկուորների ձեռ-

շակ Ղուկասեան, որ իր աւագ եղբոր շաւղին հետեւելով մեծ եռանդով եւ բոլորանուէր ծառայեց նաւթարդիւնարեւութեան շահերին եւ միշտ վերընարուեց մինչեւ իր ցաւալի մահը, 1917ին:

Արշակ Ղուկասեանից յետոյ հանգամանքները մեծապէս փոխուեցան, ինչպէս յետոյ պիտի տեսնենք:

Ղուկասեան եղբայրները յայտնի են նաեւ իրենց առատ նուիրատուութիւններովը յօգուտ ազգին: Նրանք ի յիշատակ իրենց հանգուցեալ քրոջ, Մարեամի, 1913ին, իրենց ծննդավայր Շուշի քաղաքում հիմնեցին «Մարեամ Ղուկասեան» անուանով օրիորդաց միջնակարգ դպրոց: Այդ նպատակի համար նրանք յատկացրին իրենց այնտեղի մեծ հօրենական տունը, ապա 30.000 ռուբլի նուիրեցին՝ չենքը դպրոցի յարմարեցնելու համար եւ 200.000 ռուբլի էլ նուիրեցին իրրեւ դրամագլուխ, որպէս զի դրա սովորներով դպրոցի բոլոր ծախքը հոգացուի: Նրանց հօրեղբայրը, Աւետիս Ղուկասեան, որ նոյնպէս Բաքուի մէջ էր հարստացել, իր անշարժ կայքն եւ պատրաստի դրամը կտակեց յօգուտ ազգին, որպէս զի «Ղուկասեան հայկական ձեւարան» հիմնուի: Իր մահուանից յետոյ, 1914ին, այդ կտակի գումարն, որ հասնում էր 500.000 ռուբլու (= £ 50.000), յանձնուեց էջմիածինի ի գործադրութիւն: Բայց ամենակարեւոր կտակն արել էր Արշակ Ղուկասեան, որ 1917ին վախճանուեց Բաքու, տարափոխիկ հիւանդութիւնից: Որովհետեւ իր երեք միւս եղբայրները նոյնպէս մեծահարուստ էին եւ ինք չէր ամուսնացած, ուստի իր ամբողջ կարողութիւնը, որ հասնում էր 8.000.000 ռուբլու (£ 800.000), կտակել էր Ազգին, կտակակատար նշանակելով իր եղբայրներին: Նրա բաղձանքն էր, ըստ իր կտակի, որ այդ հսկայական գումարը գործադրուի հայ ազգի մէջ ուսման եւ կրթութեան ծաւարման, որի մանրամասնութիւնքն էլ որոշել էր հանգուցեալն, բայց աւելորդ է այստեղ յառաջ բերել, քանի որ կտակը մնաց անգործադրելի: Հանգուցեալի մահից քիչ յետոյ ուսական բոլշևիքական Յեղափոխութիւնը ծագեց, որ ոչնչացրեց կամ գրաւեց բոլոր այն արժեթղթերը եւ այն կայքն, որոնցից կազմուած էր Արշակ Ղուկասեանի ժառանգութիւնը եւ այդ կերպով

հայութիւնը զրկուեց ամենամեծ կտակից, որ երբ եւ իցէ եղած էր նրա օգտին:

Հայերը մեծ դեր էին կատարում նաեւ իրրեւ Միութեան պաշտօնեաներ, կառավարչից սկսած մինչեւ հասարակ գործակատարը: Դիւանատան կառավարիչը հայ է եղած եւ շրջապատուած էր այն մասնագէտներով, որոնք նախագահի վստահութիւնն էին վայելում, որովհետեւ պաշտօնեաների ընտրութիւնը Վարչութիւնից էր կախուած: Հետաքրքրական է, որ Բաքուի այս հայ պաշտօնեաների մէջ կային այնպիսիները, որ թէ գուտ հայկական եւ թէ ընդհանուր ուսական Յեղափոխական Կազմակերպութիւնների մէջ կարեւոր դեր ունէին: «Նաւթարդիւնարեւորդների Միութեան» բարձրաստիճան պաշտօնեաներ էին Հ. Յ. Գաշնակցութեան պետերից Յ. Քաջագինուի եւ Տիգրան Բեդգադեան, որոնք յետոյ այնքան կարեւոր դեր պիտի կատարէին Հայաստանի Հանրապետութեան դաշնակցական շրջանում: Աւելի ընտրոջ է մի ուրիշ հայ յեղափոխականի գործունէութեան ընթացքը: Սա մի շատ համեստ, հաւատարիմ եւ գործունեայ երիտասարդ էր, Ղուկասեանների «Կասպից Ընկերութեան» մէջ գործակատար, որ ինչպէս յետոյ երեւաց, մեծ կտակ է ունեցել ուսական համայնակարական պետերի հետ: Մեծ Յեղափոխութիւնից յետոյ նրան գտնում ենք Սորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչը Մոսկուա, Կենդրոնական Կառավարութեան մօտ, ուր իր այս եւ յարակից պատասխանատու պաշտօններում, մեծ ծառայութիւն է մատուցած շատ հայերին, որոնց թւում նաեւ տողերիս զրոգին, Մոսկուայում: Բաքուի նաւթային արդիւնարեւորութեան այս նախկին համեստ գործակատարն է, որ այսօր վարում է Սորհրդային Հայաստանն իրրեւ Կառավարութեան Գլուխ, Սահակ Տէր Գաբրիէլեան:

Առ հասարակ Բաքուի հազարաւոր հայ գործակատարներ եւ բանուորներ մէջ մեծ թուով կային ամէն գոյնի յեղափոխականներ, բայց այս արդելք չէ եղած որ նրանք իրենց յանձնուած պաշտօնն ու պարտականութիւններն եռանդով եւ բարեխղճութեամբ կատարեն: Արդէն Բաքուն իրրեւ մեծ արդիւնարեւորական կենդրոն իր բիւրաւոր ամէն ազգի գործաւորներովը ուսական յեղափոխական խմորման կենդրոն է եղած:

Ինչպէս ասի, Բաքուն հայոց հարստանալու մեծագոյն արդիւրն է եղած: Չնչին դրամով կամ չբաւոր վիճակի մէջ Բաքու եկող եւ նաւթի շնորհիւ մեծապէս հարստացող հայերի հարիւրաւոր օրինակները կան: Դրանցից յիշեմ միայն մէկին:

Բնիկ ազուլեցի (Ազուլիս-նախկին Գողթըն դաւառ) մի պատանի, Մկրտիչ Քալանթարեանց 1875ին դալիս է Բաքու եւ իր հօր ծանօթներից Դիլարեանց անունով մի աւետարականի խանութում գործակատար է դառնում տարեկան 150 ռուբլի (£ 15) ոտճիկով, ուսում եւ պահում է խանութում: Նա իր այդ համեստ պաշտօնն այնքան յաջողութեամբ է տանում, որ ուրիշ մրցակից հայ աւետարականներ ուղում են նրան գրաւել աւելի մեծ ոտճիկ առաջարկելով: Քալանթարեանց յայտնում է Դիլարեանցին, որ ինքը չի հեռանայ նրանից եթէ փոխանակ ոտճիկն աւելացնելու, իր խանութի օգուտին ընկեր չինէ: Դիլարեանց համաձայնում է եւ Քալանթարեանց առաջին տարին իսկ՝ եւ Քալանթարեանց առաջին տարին իսկ՝ 150 ռուբլու, 1000 ռուբլի է վստափոխանակ 150 ռուբլու, 1000 ռուբլի է վստափոխանակում: Այդ տարին Բաքու է գալիս Ստեֆանիան անունով մի իտալացի, իր օտար մի մեքենագործարանի ներկայացուցիչ, որ մեքենաներ է ծախում գործարանատէրերին, բայց նաւթարդիւնարեւորութեան մեծ ապագան բայց նաւթային գործով պարագուշակելով որոշում է այս գործով պարագուշակել: Նա փնտրում է ճարտիկ եւ տեղական պիլոտներին հմուտ մի պաշտօնեայ եւ Քալանթարեանցին առնում է իր քովն, անմիջապէս տարեկան 3000 ռուբլի յատկացնելով նրան: Մկրտիչ իրրեւ Ստեֆանիանի գործակատար, նաւթային արդիւնարեւորութեան բոլոր պայմանների հետ ծանօթանում է եւ այդ 3000 ռուբլով այլ եւս չգոհանալով, որոշում է ինքնազուլու գործ անել: Իր խնայած փոքրիկ դրամագլուխով մի կտոր նաւթային հող է ձեռք բերում. այնտեղ յաջողում է գրան աւելացնում է երկրորդն, ապա երրորդը. հետզհետէ ընդարձակելով նա հինգ գնանգան տեղեր նաւթային գործ է վարում: Եւ որովհետեւ իր ունեցած գրամագլուխը բաւական չէր ամէն տեղ հոր փորելու եւ հարկ եղած գործիքները ձեռք բերելու, նա ամէն մի նոր հողի համար իր ծանօթներից ու բարեկամներից ընկերութիւններ է կազմում եւ իր գործը յառաջ տանում: Այս կերպով նրա ստացած հում նաւթի քանա-

կութիւնն ամէն տարի աճում է. աճում է միեւնոյն ժամանակ նաւթի գինն եւ արտադրութիւնը: Գործն այնքան յաջող է գնում, որ իր գալուց 25 տարի յետոյ, նրա տարեկան եկամուտը 150 ռուբլուց դարձել էր 150.000 ռուբլի: Այդ ուղղութեամբ նա գործել է այնտեղ, ինչպէս եւ ինքս ախանառես եմ եղել, եւ իր գործի ընկերների հետ համեմաղխութեամբ, իր կազմակերպած ձեռնարկութիւնները յառաջ տարել: Հայ-թրքական անմիաբնդհարումից յետոյ, 1906ին, նա իր բնաւորութիւնը տեղափոխում է Թիֆլիս, ուր իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնում է իր որդի լիւսուր ուշադրութիւնը դարձնում է իր որդուց ուսման եւ կրթութեան վրայ: Միեւնոյն ժամանակ նա հետզհետէ ծախում է Բաքուի իր ձեռնարկութիւնները եւ երբ 1912ին բոլորովին քաշում է այնտեղից, նա մի քանի անգամ միլիոնատէր էր:

Բայց Բաքուն միայն հայ աւետարականների կամ աւելի ճիշտը՝ հարստացած հայ ղեղապիներ թաղաք չէր: Նաւթային արդիւնարեւորութիւնն իր գնանգան ճիւղերովը պէտք ունէր մեծ թուով մասնագէտների: Ուստի բարձրագոյն ուսում առած հայ երիտասարդներ, Կովկասի ամէն կողմից՝ մասամբ ինքնաբերաբար, պաշտօն որոնելու նպատակով եւ մասամբ էլ իրենց ծանօթ ու բարեկամների հրաւերով, լցուեցան Բաքու: Երկրները բնականաբար մեծ մասամբ աւելուցանում էին, այսինքն նաւթային արդիւնարեւորութեան համար օգտակար մասնագէտներ ինչպէս ճարտարագէտներ (ingenieur), հանքարան, քիմիարան եւայլն: Այս հարիւրաւոր հայ մասնագէտների մէջ կային այնպիսիներն, որոնք շատ մեծ դեր պիտի կատարէին նաւթային արդիւնարեւորութեան կատարման մէջ: Նրանց մէջ ուշադրութեան արժանի են վերեւ արդէն յիշուած շայլ Գեանջուցեան, Կոնստ. Սատիսեան (վախճ.), Արշակ Պարոնեան, Աստ. Վաչեանց, Միքայէլ Ալիբէգեան (վախճ.), Ստեֆան թաղիանոսեան, Սեդրակ Տէր Գրիգորեանց (վախճ.) եւայլն եւայլն, որոնց հետ մօտիկ ծանօթութիւն եւ բարեկամական յարեւորութիւններ եմ ունեցած: Այս մասնարարների մէջ կային այնպիսիներն, որոնք սեպհական կարեւոր գործեր են ստեղծած եւ միեւնոյն ժամանակ ազգային, հասարակական կարեւոր դեր են կատարած: Առանձնապէս պիտի յիշատակեմ նրանցից երկու-

զիւտ թուրքը Հաջի Ալիյան Արդին Թաղիել անունով մի անգրագէտ գեղացի էր: Սա նախ ընկերացաւ մի հայի, Պողոս Սարգիսեանի³ հետ եւ նաեւ թային գործի ձեռնարկեց շատ վաղ. ապա երբ իր առուտուրը մեծապէս յառաջացաւ, ինքը լիառատ կերպով վարձատրելով Սարգիսեանին, նրանից բաժանուեց եւ մինակ շարունակեց իր նաեւ թային արդիւնաբերութիւնը եւ դարձաւ Բաքուի ամենայայտնի դէմքերից մէկը, եւ շատ մեծ հեղինակութիւն էր վայելում ոչ միայն թուրքերի այլ եւ հայոց մէջ: Սա էր, որ Բաքու առաջին թատրոնը շինեց, եւ հայ թատերաստներին տուեց հայկական ներկայացումներին համար⁴:

Թաղիելից օրինակ առնելով մի քանի ուրիշ ընկի թուրքեր եւս նաեւ թային ձեռնարկութիւններին մէջ մտան եւ նոյնպէս մեծ յաջողութիւն ունեցան: Բայց հայերի ազդեցութիւնը թուրքերի վրայ երեւաց մանաւանդ կրթական, մշակութային ասպարէզում: Նրանք սկսան իրենց որդիներին մեծ թուով ուսուսկան ուսումնարանները տալ եւ ապա նաեւ բարձրագոյն դպրոցներն ուղարկել: Թաղիել շատ չքաւոր թուրք ուսանողների ուսման ծախքերն է հոգացել: Համալսարաններում եւ այլ դպրոցներում միասին ուսում առնող Բաքուցի հայերն եւ թուրքերն, երբ

դարձան, լաւ ընկերներ եղան: Թուրքերը դերակշռող դեր էին կատարում գլխաւորաբար քաղաքային վարչութեան գործերում, որովհետեւ իրենք քաղաքի կալուածների մեծ մասի տէրերն էին, որով եւ քաղաքային ընտրութիւնների ժամանակ՝ ընտրեալներին մեծամասնութիւնն էին կազմում: Մի ուրիշ հարուստ թուրք՝ Հայոց Սարգսիւրական ընկերութիւնից օրինակ առնելով մի շքեղ դպրոցական շէնք շինեց: Ամէնից աւելի յաջողութիւն ունեցաւ թուրքերի մէջ թատրոնական գործը: Թուրք նորաւարտ մտաւորականները հայերի օրինակից դրդուած իրենց «Կուլտուրական Միութիւնն» ստեղծեցին, որի գլխաւոր գործունէութիւնը՝ թատրոնն էր: Նրանք սկսան ուսուերէն կատակերգութիւնները թրքերէնի վերածելով Թաղիելի թատրոնում ներկայացնել: Այս ներկայացումներին մեծ բազմութեամբ յաճախում էին նաեւ հայերն, որոնց համար թրքերէնը մեծապէս մատչելի լեզու էր: Պէտք է այս էլ աւելացնեմ, որ երբ հայերը բացի Բաքուից ուրիշ մտաւորական կենդրոններ ունէին ինչպէս Թիֆլիսը, Երևանը, Ալեքսանդրոպոլն եւայլն, թուրքերի ամբողջ այդ ոյժը կենդրոնացած էր Բաքուի մէջ: Թրքական ներկայացումների ժամանակ դերասանուհիների դերը հայուհիներն էին կատարում, ինչպէս էր Կ. Պոլսում եւս, մինչեւ վերջին Յեղափոխութեան տարիներն:

Ուշադրութեան արժանի երեւոյթ էր նաեւ հետեւեալը:

Չուխաճեանի «Ալէքէրի՛՛ չօրհօր Ալլա» օպերէտի գտած մեծ ընդունելութիւնը առիթ տուեց մի թուրք երգահանի, Հաջիբէգով անունով, որ ինքն էլ այդպիսի մի երաժշտական կատակերգութիւն հեղինակէ, որ շատ աւելի մեծ յաջողութիւն գտաւ հայոց մէջ քան թուրքերի: Այս թրքական օպերէտը՝ հանրաճանօթ «Արշին մալ ալա՞ն» (= Ո՞վ է կանգունով ապրանք ուզում) է, որի բնագիրը հայերէնի թարգմանուեց իսկոյն եւ այնուհետեւ հայկական բեմի մշտական դարդն է դարձած: Այս կատակերգութեան՝ հայոց մէջ տարածման պատճառն այն է, որ նրա բոլոր եղանակներն այնչափ ծանօթ են եւ ժողովրդական հայոց մէջ որչափ թրքաց: Արդէն կովկասեան ժողովրդական երգերին ծանօթ հայ երաժիշտներ աշխատակցած եւ օգնած են այս խնդրում Հաջիբէգովին: Ամ-

³ Այս Սարգիսեանի այբին, տիկին Եղիարէթ Սարգիսեան, Բաքուի հայ տիկիներին մէջ, որոնք ազգային մեծ դործունէութիւն են ունեցած, առաջնակարգ տեղ էր զբաղում: Ի մէջ այլոց նա այնպէս ջերմ «մշակական» էր, որ «Մշակի» հիմնադրի հանդէպ էր յարգանքն ու համակրանքը ցոյց տալու համար, կատարեց ծովի վրայ բանող իր սեպհական շողեանու «Գրիգոր Արծրունի» անունով էր մի կրտսէ:

⁴ Ես Բաքու էի, երբ առաջին թատրոնում: Թաղիել անձամբ եկել էր ներկայացման: Միջնորդը ժամանակ մի քանի հայերի հետ միասին դնացիներ թաղիելի օթեակը շնորհակալութիւն յայտնելու նրան: Թաղիել շատ ուրախ էր, որ նրա յառաջգիտական ձգտումը դնահատուած էր: Նա ի մէջ այլոց ասաց մեզ. «Թուրքերը ինձ մեկազրում են թէ ինչո՞ւ եւս մզկիթ չեմ շինել այլ թատրոն: Ես պատասխանեցի այդպիսի անասելի հարց առաջարկողներին թէ թուրքերն այնչափ շատ մզկիթ ունին, որ եթէ ինձանից կախուած լինէր, ես այդ մզկիթների մի մասը թատրոնի, դպրոցի, ակումբի եւ այլ այդպիսի կրթական հաստատութիւնների կը վերածէի մեր ազգային ժողովրդի դարգացման նպատակու համար»: Ես լաւ ծանօթ էի նրա հետ. նա մի քանի անգամ հրաւիրած է ինձ իր փառաւոր տունն եւ ներկայացրած էր երկու տասարդ. կնոջ, որ ուսուսկան միջնակարգ դպրոցում աւարտած ուսեալ թրքուհի էր: Նրա մեծ եւ շքեղ դահլիճի մտնամեծ գորգը հօշակաւոր հայ նիւթի էր: Արագոյնիսկ Բոսֆորի լայնածաւալ նիւթն էր:

Թաղիելից յետոյ մի հարուստ հայ (Մայիլեան), աւելի նորաճեւ եւ աւելի մեծ յարմարութիւններով նոր թատրոն շինեց, որ թէ տեղական հայ եւ թէ եկուոր ուս խումբերը ներկայացումներ էին տալիս:

բողջ Անդրկովկաս երգում է այդ եղանակներն, որոնք, մեծ հմտութեամբ եւ ճաշակով ժողովել եւ կանոնաւորել էր թուրք երաժշտագէտը: — Այս մեծ յաջողութիւնից խրախուսուած՝ Հաջիբէգով մի երկրորդ օպերէտ եւս հեղինակեց — «Օ օլմասըն բու օլսուն» — նա (աղջիկը) թող չլինի, սա լինի. բայց առաջինի հրատարակումը չունէր:

Շատ ափսոս, որ այս հայ-թրքական

մտերմական յարաբերութիւնները, Բաքուի մէջ պիտի նսեմանային այն մեղապարտ դիպուածների հետեւանքով, որոնք ծանօթ են «հայ-թրքական ընդհարումներ» անուամբ եւ որոնց վրայ խօսելու տեղը չէ այստեղ:

(Շարունակելու:) ՍԱՐԳՍԵԱՆ



ԵՐՈՒԱՆԻ ԼԱԼԱՅԵԱՆ

ՀԱՅ ՄՆԾ ԱԶԳԱՅԻՐԸ

Փետրուար 28ին վախճանեցաւ Երեւանի մէջ հայ մեծ ազգագիրն Երուանդ Լալայեան:

Անիկա այն հազուագիւտ Հայերէն էր, որոնք կը ծնանին գաղափարականի համար, կ'ապրին գաղափարականով եւ կը վախճանին նոյն գաղափարականին անձնագործ: Կռիւ, յամառութիւն եւ յարատեւութիւն անբաժին ընկերներն են անոնց:

Միանգամ իջած կոռուի ասպարէզ, յարատեւեց անիկա հոն յամառօրէն մինչեւ մայրամուտը իր արեւին: Դժուարութիւնները չընկճեցին իր կորովը. բայց ինքը զգեստնեց դելը. ու ելաւ յաղթական ըմբռամարտ կոռուէն: Թողնելով հարուստ աւարն, ընդարձակ նուաճումները ժառանգութիւն իր Տոհմին, տուաւ հրաժեշտ ասպարէզին, երթալու հանգչելու անուշակ յալտեմնականութեան մէջ դափնեպսակ:

Երբ հրապարակ ելաւ Լալայեան, սաղմսային վիճակի մէջ էր հայ Ազգագրութիւնը, ազգագրական անգիր նիւթերը դեռ նոր էին սկսած շարժել հետաքրքրութիւն (Սրուանձտեանց), իբրեւ գիտութիւն չէին առնուած անոնք նկատի: Եւ երբ յօրինուածական աշխատանք առաջարկուեցաւ (Խալաթեանց), չեղան գործին փարողներ: Ժամանակը կը սահէր սակայն. Կրոնոս կը գործէր աւերներ իր ճանապարհին վրայ. եկամուտ ազդեցութիւններ կը յեղափոխէին ժողովրդական ըմբռումները. հին սովորութիւնները, անգիր գրականութիւնը կը մատնուէին մոռացութեան. ենթարկուած էր վթարի հայ ազգագրութեան ակնադրիրը:

Երուանդ Լալայեան տակաւին երիտասարդական կորովի մէջ, հլահանգուած մասնագիտութեամբ երրորդական կենդրոններու մէջ, երեւցաւ հրապարակի վրայ իբրեւ ազգագիր՝ հրաիրելու ուշադրութիւն դէպի հայ ժողովրդական կենցաղ, արձարծելու յարգանք հանդէպ հայ մտտիապաշտ հաւատքին, անգիր քանահիւսութեան, կազմակերպելու ոյժեր գրի առնելու հնաւանդ հաւատալիքներ, սովորութիւններ, քանահիւսութիւններ, որոնց վրայ նախապատմական եւ պատմական հայուն ոգին էր թառած:

Սակաւներու ականջին մէջ միայն դողանջեց քարոզին ձայնը: Անիկա, որ կոչուած էր ուսումնասիրել տոհմային հին քարեքրու մնացորդները, ստիպուած զգաց նուիրել ինքզինքը հում նիւթեր հաւաքելու: Արագ արագ ընթացաւ հայա-